ԳԻՏՆԱԿԱՆԻ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Իմ առաջին տպավորությունը Արամ Գրիգորյանից այսպիսին էր՝ երիտասարդ, էլեգանտ, բարյացակամ ու ժպտադեմ մարդ է: Այդ հանդիպումը սրանից երեսուներկու տարի առաջ էր: Բայց անցած երեսուներկու տարիների ընթացքում իմ այդ առաջին տպավորությունը շատ չփոխվեց: Արամ Գրիգորյանն այսօր էլ երիտասարդ է թվում, թեև 75 տարեկան է, և մազերն էլ ճերմակել են: Պարզապես մարդու մեջ երիտասարդության լիցքը անսպառ է: Եվ գիտության մեջ միշտ եղել է նորի փնտրտուքների մեջ, չի ծերացել հոգով ու մտքով: Պատահական չէ, որ երիտասարդ գիտնականներն ու գրողները միշտ փնտրել են նրա ընկերությունն ու աջակցությունը: Ուրիշ էլ ո՞վ պետք է հասկանար ու գնահատեր երիտասարդների որոնումները:

Հիշում եմ նրա առաջին գիրքը՝ նվիրված Եղիշե Չարենցին, այդ գրքում անցկացված զուգահեռները Չարենցի պոեզիայի և մասնավորապես ֆրանսիական պառնասականների ստեղծագործության միջև: Ինքը այս գիրքը այնքան էլ հաճույքով չի հիշում. բայց այստեղ արդեն երևում է նրա գիտական մտածողության գլխավոր առանձնահատկությունը՝ դուրս գալ տրորված ճանապարհներից, փնտրել նոր, անսովոր մոտեցումներ՝ հաճախ հարուցելով գործընկերների զարմանքը, նաև մերժումը:

Արամ Գրիգորյանը բազմաթիվ աշխատություններ է գրել՝ նվիրված գրականության պատմությանը: Բայց նրա տարերքը գրականության տեսությունն է: Ահա նրա աշխատություններից մի քանիսը՝ «Գեղարվեստական երկի ստրուկտուրայի վերլուծություն», «Գրականություն և տեսություն», «Գեղարվեստական ոճի պրոբլեմները», «Գեղարվեստական ոճը և գրականության զարգացումը», «Գրական երկի ամբողջականությունը» և այլն: Այս բոլոր գործերում քննվում են գրականության տեսության կարևորագույն խնդիրներ: Արդեն վերնագրերից պարզ է, որ Գրիգորյանին հատկապես հետաքրքրում էին գրականության տեսության կարևորագույն խնդիրները՝ ոճ, գեղարվեստական պատկեր, գեղարվեստական երկի ամբողջականություն և այլն: Երբ նրա գրքերը լույս էին տեսնում, գրական-տեսական աշխատությունները մեզանում հազվադեպ էին: Դրանք իսկապես նորություն էին հայ գրականագիտության մեջ, փնտրված նաև Ռուսաստանում և այլ երկրներում:

Ժամանակին Էդվարդ Ջրբաշյանը Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտում ստեղծեց գրականության տեսության բաժին: Դա առաջին գիտական կոլեկտիվն էր, որն զբաղվում էր գրականության տեսության խնդիրներով: Երբ Ջրբաշյանը տեղափոխվեց ինստիտուտից, բաժինը գլխավորեց Արամ Գրիգորյանը: Եվ գլխավորում է մինչև այժմ՝ արդեն ավելի քան երեսուն տարի: Այդ

տարիներին բաժնի աշխատակիցները հրատարակեցին մի քանի կոլեկտիվ աշխատություններ՝ «Գրական ժանրեր», «Գրական ստեղծագործության վերլուծություն» և այլն: Եթե արդարացի լինենք, այդ բաժնի գործունեության հետ է կապված գրականության տեսության զարգացումը Հայաստանում: Արամ Գրիգորյանը այդ բոլոր աշխա-տությունների ոգեշնչողն ու ղեկավարն է եղել: Բաժնի ամենավերջին աշխատանքը «Գրականության ազգային առանձնահատկությունները» գիրքն է:

1996 թ. Արամ Գրիգորյանն ընտրվեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի անդամ:

1979 թ. Գրիգորյանն ընտրվեց Հայաստանի գրողների միության քարտուղար: Նա համակարգում էր Հայաստանի գրողների միության արտաքին կապերը, և նրա շնորհիվ ամրապնդվեցին հայ գրողների կապերը ռուս և Խորհրդային Միության մյուս ժողովուրդների հետ: Իր բնավորության շնորհիվ նա հեշտ կարողանում էր կապեր հաստատել տաղանդավոր մարդկանց հետ, նրանց կապել հայ գրականությանը, կազմակերպում էր հայ գրողների գործերի հրատարակությունը Մոսկվայում և ԽՍՀՄ այլ քաղաքներում:

Պարգևներն Արամ Գրիգորյանին չեն շրջանցել: Խորհրդային տարիներին պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, ստացել Հայաստանի Պետական մրցանակ: Բոլորովին վերջերս դարձավ Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի վաստակավոր պրոֆեսոր և պատվավոր դոկտոր:

Եվ այսօր նույնքան (գրեթե նույնքան) երիտասարդ, ինչպես մեր ծանոթության սկզբում, Արամ Գրիգորյանը շարունակում է աշխատել Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում և Ռուս-հայկական համալսարանում, մասնակցել հանրապետության գրական և գիտական կյանքին, և նրա գործընկերները նրանից դեռ շատ սպասելիքներ ունեն:

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Ա. Կ.
Բանասիրական գիտությունների դոկտոր

Հանդեսի խմբագրակազմը և խմբագրական խորհուրդը շնորհավորում են հոբելյարին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արամ Պարույրի Գրիգորյանին իր ծննդյան 75-ամյակի առթիվ, մաղթում հետայսու ևս արևշատություն և իր անհատականության արժանի մտահղացումների իրականացում:

Լրաբեր 3-15